Doi: 10.56737/2953-7843-2024.03-166

Ի ՀԵՃՈՒԿՍ ԴԺԿԱՄԱԿ ԱՆԲԱՆԻՑ ԵՒ Ի ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՐՕՏԵԼՈՅ[1]

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչութիւնը հանդէս է եկել նոր՝ ողջունելի եւ սպասուած նախաձեռնութեամբ. միաբանների, Հայ Եկեղեցու վարդապետների, ինչպէս եւ աշխարհիկ հեղինակների աշխատասիրութեամբ ի լոյս կընծայուեն հոգեւոր-քարոզչական (մօտ եօթ տասնեակ անուն), ծիսատօնական (գրեթէ չորս տասնեակ), կրթա-դաստիարակչական, հանրամատչելի (յիսունից աւելի վերտառութիւն), ուսուցական բնոյթի գրքեր՝ «Քրիստոնեայի գրադարան» ընդհանուր խորագրի ներքոյ։ Հակառակ վերջին տարիների զարգացումների, երբ ուսումնական ծրագրերի եւ դպրոցական դասագրքերի մակարդակով պայքար է հրահրւում Հայ Եկեղեցու դէմ, ազգի հոգեւոր զաւակները, հաւատացեալ համայնքը եւ նոյն իսկ հաւատքից եւ կրօնից իրենց հեռու պատկերացնողները առանձնակի հետաքրքրութեամբ եւ սիրով, առաւել ջերմութեամբ եւ եռանդով կառչեցին հայրենի ակունքներին եւ արմատներին։ Այն հարցերն ու պատասխանները, այն գիտելիքներն ու տեղեկութիւնները, որ դեռատի տարիքից պիտի սերմանուէին մեր սերունդների հոգիներում ու սրտերում, այն բարու եւ գեղեցիկի հատիկները, որ պիտի նպաստէին հայ մարդու՝ հայրենասէրի ու ազգասէրի կայացմանը, անհասկանալի, իսկ իրականում պարզորոշ գիտակցուող պատճառներով ջնջուեցին ուսումնական ծրագրերից, հանուեցին դասագրքերից, ասես ներկայիս միակ խնդիրը «Հայ Եկեղեցու պատմութիւն» առարկան էր, ազգային դաւանանքն ու կրօնը...

---

[1]* *Ստացուել է՝ 31.03.2024, գրախօսուել է՝ 16.04.2024*
Էլ. հասցէ՝ ahov1969@rambler.ru, lerhakobyan1970@gmail.com։

Կրթական ու դասագրքային բացը լրացնելու է կոչուած Մայր Աթոռի նոր մատենաշարը, եւ ուրախալի է, որ առաջին հրատարակութիւններն արդէն իսկ հասել են ընթերցողին։ Դրանք Սուրբ Էջմիածնի միաբան Շահէ ծ. վրդ. Անանեանի հեղինակած՝ «Մարդն Աստծու առաջ», «Ո՞վ է քրիստոնեան», «Պահք եւ պահեցողութիւն» գրքոյկներն են։ Առաջինը՝ «Մարդն Աստծու առաջ։ Աղօթքի նշանակութիւնը քրիստոնեայի կեանքում»[2], հետեւեալ անդրադարձներն է ներառել. «Ի՞նչ է աղօթքը», «Աստուած մեր հայրն է», «Ինչպէ՞ս աղօթել», «Ե՞րբ եւ որտե՞ղ աղօթել», «Աղօթքի մատուցման կերպը»։ Համառօտ ամփոփման մէջ կարդում ենք. «Աղօթքը քրիստոնեայի կեանքի ամենաէական ու կենսական սնունդն է, առանց որի անհնար է պատկերացնել քրիստոնէութիւնը։ Սակայն աղօթելն այսօրուայ հասարակութեան մէջ բազմաթիւ, հիմնականում՝ աղճատուած ու սխալ մեկնաբանութիւնների է ենթարկւում։ Ուստի գրքոյկում հանրամատչելի կերպով ներկայացւում են աղօթքին վերաբերող հիմնական հարցադրումների բացատրութիւնները, որոնք կարեւոր են այնու, որ այսօրուայ քրիստոնեան գիտակցի աղօթքի տեղն ու դերն իր հոգեւոր կեանքում»։ Երկրորդ գրքոյկը՝ «Ո՞վ է քրիստոնեան»[3], փոքրիկ մուտքից յետոյ («Սկիզբ»), անդրադառնում է «Քրիստոնեաներ՝ Քրիստոսից առաջ եւ յետոյ», «Հաւատալ եւ հետեւել Քրիստոսին», «Քրիստոնեան՝ առանց եկեղեցո՞ւ», «Ընտրեալների տասը նշանները» նիւթերին։ Գրքոյկի ամփոփումը սահմանում է՝ «Հայութեան ճնշող մեծամասնութիւնը քրիստոնեայ է։ Շատերի համար քրիստոնէութիւնն ու քրիստոնէական կեանքը ժառանգաբար՝ սերնդէ սերունդ ստացուած իրողութիւններ են»։ Հեղինակը խնդրին առընչուող հարցադրումների եւ դրանց բացատրութիւնների միջոցով ներկայացնում է՝ ով է քրիստոնեան հարցադրման պատասխանը։ Գրքոյկը եւս հանրամատչելի է եւ ուղղուած է ընթերցող լայն շրջանակին։

Եւ վերջապէս երրորդ գրքոյկը՝ «Պահք եւ պահեցողութիւն»[4] («Պահքն ու պահեցողութիւնն Աստուածաշնչում», «Պահքն ու պահեցողութիւնը եկեղեցում», «Պահքը միայն ուտելիքից հրաժարում չէ», «Պահք եւ ապաշխարութիւն», «Մեր հոգեւոր «ճաշացանկը», «Անապատի հայրերը՝ պահեցողութեան մասին»), հատուածներով ուրուագծում է պահքի եւ պահեցողութեան մասին քրիստոնէական հոգեւոր աւանդոյթը, որ մեզ փոխանցել է

---

[2] *Ս. Էջմիածին, 2023, 72 էջ։*
[3] *Ս. Էջմիածին, 2024, 48 էջ։*
[4] *Ս. Էջմիածին, 2024, 48 էջ։*

բազմաթիւ խորհրդածութիւններ, ճառեր, խրատներ, յորդորներ... Հեղինակը կարեւորում է քրիստոնէական հոգեւոր կեանքի հայրերի վարքին ու կենցաղավարութեանը վերաբերող գրականութիւնը, որտեղ պահքի եւ պահեցողութեան մասին դատողութիւնները բխում են անապատի հայրերի ու ճգնաւորների անձնական փորձառութիւնից: Ներկայ գրքոյկը նոյնպէս հանրամատչելի է եւ ուղղուած է ընթերցող լայն շրջանակին:

Ներկայումս խորհրդային դարաշրջանի (կամ դրան «իրաւայաջորդած») քննադատութեան աղմուկի ներքոյ մեր «անկախ» պետութիւնը «իր սրտի» ձեռնարկներն է երկնում դպրոցների համար: Երբեք կայսերապետական ժամանակներով հիացած չենք եղել, սակայն յանուն արդարութեան բերենք այն տարիների՝ սովետական դպրոցական դասագրքից[5] մի քաղուած. *«1890-ական թուականներին թուրքական կառավարութեան հալածանքներն ու ճնշումները հայերի նկատմամբ աւելի խստացան: Սուլթան Աբդուլ Համիդը ծրագրել էր հայերի մասսայական կոտորածներ կազմակերպել եւ լկտիաբար յայտարարում էր, թէ հայկական հարցը պէտք է լուծել հայերին կոտորելով... 1895–1896 թուականներին Պոլսում, Էրզրումում[6] [Կարին], Տրապիզոնում, Վանում, Խարբերդում, Տիգրանակերտում, Սեբաստիայում, Մալաթիայում, Հալէպում եւ բազմաթիւ այլ վայրերում տեղի են ունենում հայերի մասսայական ջարդեր: Թուրքական բարբարոսներն անխնայ կոտորում էին տղամարդկանց, կանանց, ծերերին ու երեխաներին, շատերին այրում էին խարոյկների վրայ, կախում ծառերից, յօշոտում վայրի գազանների պէս:*

1890-ական թուականների կոտորածներին զոհ գնաց մօտ 300 հազար հայ: 80 հազար հոգի փախաւ եւ ապաստան գտաւ Անդրկովկասում: Հարիւրաւոր գիւղեր կողոպտուեցին, հրի ու սրի մատնուեցին»[7]:

---

[5] ՊՐՈՖ. Վ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ, ՊՐՈՖ. Ս. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ, ԴՈՑ. Շ. Ռ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, *Հայ ժողովրդի պատմութիւն: Դասագիրք միջնակարգ դպրոցի* IX–X *դասարանների համար, հինգերորդ հրատարակութիւն: Հաստատուած է Հայկական ՍՍՌ լուսաւորութեան մինիստրութեան կողմից, Երեւան, 1966:*

[6] *«Հայաստանի եւ յարակից շրջանների» բառարանը (հտ. 2, Երեւան,1986, էջ 366) այս անուան համար նշում է՝ «տ[ես] Կարին»: Տեղին ենք համարում բերել կարնեցի հեղինակներից մէկի բացատրութիւնը եղծման վերաբերեալ. «Էրզրում, որ աղաւաղութիւնն է* Արծնում, *յոյների* Արծն,– *որովհետեւ դժուար էր իր բուն անունով արտասանել» (տե՛ս* Սէյլան [Արշակ Մադոյեան], *Հայթա-Ֆիրատ, Թիֆլիս, 1904, էջ 15):*

[7] *Տե՛ս դասագրքի 179-րդ էջը: Ընդ որում՝ «Մեծ պետութիւնների դիրքը» պարբերոյթում յիշատակուած է ոչ միայն եւրոպական երկրների, այլ նաեւ Ռուսաստանի քաղաքական գիծը. «Անգամ 1890-ական թուականների հայերի մասսայական կոտորածների ժամանակ մեծ պե-*

Անշուշտ հիմնաւոր կասկածներ կան, թէ այսօր անգամ բերուածի կիսատ ձեւակերպումներով մի դասագիրք դուրս չի գայ համապատասխան նախարարութիւնից, որ, թերեւս, ցուցակների ճշգրտմամբ է զբաղուած։ Սակայն մինչ «հայրենի» պաշտօնէութիւնը զոհերի համահաւաք աղիւսակ ստուգելուն է սեւեռուած, Մոսկուայում «ուխտադրուժ» կերպով լոյս է տեսել «Հոլոքոստի եւ ցեղասպանութիւնների պատմութիւն. Ի. դար»[8] բուհական դասագիրքը, որ ի թիւս այլոց՝ հետեւեալ բաժիններն ունի՝ «Հայոց ցեղասպանութիւնն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին»[9] եւ «Հոլոքոստն ու Հայոց ցեղասպանութիւնը Ի. եւ ԻԱ. հարիւրամեակների գեղարուեստագեղագիտական հոլովոյթում»[10], որոնց հաւուր պատշաճի անդրադարձ կլինի ամսագրի ապրիլեան համարում՝ ի հեճուկս...

ԱՐՄԷՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

տութիւնները դրսեւորեցին իրենց գիշատիչ, նենգ ու խարդախ քաղաքականութիւնը։ Գերմանիան, Թուրքիային իր ազդեցութեան տակ գցելու համար, օգնում էր նրան, հրահրում հայկական ջարդերը, Անգլիայի պրեմիեր-մինիստր լորդ Սոլսբերին հայերի աղերսագրերին պատասխանում է, թէ՝ «Անգլիական նաւերը չեն կարող բարձրանալ Հայաստանի լեռները [Տաւրոսի լեռները]։ Ֆրանսիան եւ ցարական Ռուսաստանը նոյնպէս ոչինչ չարին հայկական կոտորածները կանխելու համար։ Ալեքսանդր III-ի ռեակցիոն կառավարութեան արտաքին գործերի մինիստրը, մեծապետական շովինիստ Լոբանով-Ռոստովսկին յայտարարում էր, թէ՝ «Հայաստանը մեզ հարկաւոր է առանց հայերի»։ Բոլոր մեծ պետութիւնները անխտիր հայկական հարցն օգտագործում էին իրենց գաղութարարական նպատակների համար։ Հայ ժողովրդի ազատութեան ու անկախութեան գաղափարը նրանց համար ոչ մի արժէք չունէր» (էջ 180–181)։

[8] *Տե՛ս* «История холокоста и геноцидов. XX век», Учебное пособие для вузов, Под редакцией И. А. Альтмана, Москва, 2022։

[9] *Տե՛ս անդ, էջ 28–52։*

[10] *Տե՛ս անդ, էջ 138–171։*